

Անվտանգության կանոններ համատեղ ուղևորության վերաբերյալ COVID-19-ի ժամանակ Տեղեկատվություն՝ ձեր համայնքի հետ կիսվելու համար Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ

- COVID-19-ի համաճարակի ժամանակ երբեմն՝ աշխատանքի հասնելու, խանութ կամ հանդիպման գնալու համար, դուք պետք է ուղևորվեք նույն մեքենայի, վե՛նի, ավտոբուսի կամ այլ տրանսպորտային միջոցի մեջ այլ մարդկանց հետ, ովքեր չեն ապրում միևնույն տանը:
- COVID-19-ով չվարակվելու համար, անհրաժեշտ է սահմանափակել ուղևորություններն ոչ ձեր տնային տնտեսության անդամների հետ: Ուրիշների հետ ուղևորվեք միայն անհրաժեշտության դեպքում:
- Որևէ մեկի հետ ուղևորվելիս, հետևեք անվտանգության այն նույն կանոններին, որոնց դուք պետք է հետևեք, երբ դուրս եք գալիս հանրության մեջ և աշխատում եք խուսաձուլ վարակից:
- Ահա մի քանի խորհուրդ անվտանգության վերաբերյալ, որոնց պետք է հետևեք համատեղ ուղևորության ընթացքում:

Նախքան ուղևորվելը

- Երբեք մի՛ ուղևորվեք միևնույն մեքենայով ուրիշների հետ, եթե ունեք հազ, ջերմություն, կամ դուք ձեզ հիվանդ եք զգում:
- Նախքան մեքենան ստեղծելը՝ լվացեք ձեր ձեռքերն օճառով:
- Փորձեք ուղևորվել մի քանի մեքենաներով կամ վե՛նով, որպեսզի մեկ մեքենայում միաժամանակ ավելի քիչ մարդ լինի:
- Խուսափեք ուղևորությունից, եթե վարորդը կամ ուղևորները դիմակ չեն կրում:

Մեքենայի ներսում

- Միշտ կրեք այնպիսի դիմակ, որը կփակի ձեր բերանը և քիթը՝ մեքենայով, վե՛նով, ավտոբուսով կամ այլ տրանսպորտային միջոցով ուղևորվում եք այն մարդկանց հետ, ովքեր ձեզ հետ նույն տանը չեն ապրում:
- Փորձեք սահմանափակել մարդկանց թիվը մեկ մեքենայի մեջ:
- Հնարավորության դեպքում նստեք իրարից հեռու: Փորձեք պահպանել վեց ոտնաչափ հեռավորությունը:
- Փորձեք չնստել/բաց թոնել միջին նստատեղը:
- Սահմանափակեք խոսելու/զրուցելը մեքենայի մեջ գնտվելիս, քանի որ COVID-19 վարակը տարածվում է հազի, փռչող միջոցով և զրուցելիս:
- Փորձեք ոչինչ չուտել և չխմել մեքենայի մեջ գտնվելիս:
- Հազալիս կամ փռչտալիս՝ փակեք ձեր բերանը ձեր արմուկով:

- Ունեցեք ձեզ հետ ձեռքի ախտահանիչ, որպեսզի ուղևորության ընթացքում մարդիկ կարողանան մաքրել ձեռքերը: Օգտագործեք այն, երբ դիպչում եք հաճախակի հպվող մակերեսներ:
- Բացեք մեքենայի պատուհանները՝ ներս թողնելով արտաքին օդի հոսքը, կամ ուժեղացրեք օդափոխությունը մեքենայի մեջ:

Ջամատեղ ուղևորությունից հետո

- Ուղևորությունից հետո, լվացեք ձեր ձեռքերը օճառով և ջրով կամ օգտագործել ձեռքի ախտահանիչ: